

Դավիթ Լոքյան. «ՀՀ-ում տեղական և տարածքային մարմիններում իրականացվող խոշորածավալ բարեփոխումների կողքին կանգնած են ԵՄ մեր գործընկերները»

24.10.2017

<http://mtad.am/hy/news/item/2017/10/24/mtadhamajoxov/>

Այսօր Երևանում մեկնարկել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Արևելյան Գործընկերության ռեգիոնալ և տեղական իշխանությունների համաժողովի (CORLEAP) «Նորարարությունները և տարածքային զարգացումը՝ որպես Արևելյան գործընկերության երկրների աճի գործոններ» խորագրով համաժողովը: Համաժողովում բացման խոսքով հանդես են եկել ՀՀ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Սվիտալսկին, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարեն Նազարյանը, Գդանսկի քաղաքապետ, Ռեգիոնների եվրոպական կոմիտեի և CORLEAP-ի անդամ Պավել Ադամովիչը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան առաքելության ղեկավար Կլաուս Վենդելբերգերը:

Նախարար Դավիթ Լոքյանը նախ շնորհակալություն է հայտնել իր գործընկերներին՝ արդեն երկրորդ անգամ CORLEAP-ի կոնֆերանսը Հայաստանում կազմակերպելու համար, ինչը նախարարի խոսքով, լուրջ ոգևորություն է առաջ բերում ՀՀ համայնքներում: «Մա Արևելյան գործընկերության լավագույն ձևաչափերից մեկն է, որը շատ ինտենսիվ նպաստում է մեր երկրում տարածքային և համայնքային զարգացման գործընթացին: ՀՀ-ում սկսված տեղական և տարածքային մարմիններում իրականացվող խոշորածավալ բարեփոխումների կողքին կանգնած են Եվրամիության մեր գործընկերները», - ասել է Դ. Լոքյանը: Հիշեցնելով, որ նոյեմբերի 5-ին ՀՀ 350 համայնքում ընթանալու են ընտրություններ, նախարարն ընդգծել է, որ դրանց արդյունքում կառավարման օպտիմալացման փոփոխություն է իրականացվելու. «Այդ համայնքներն իրենց գործառույթները կանոնակարգելու են, իրենց եկամուտներն ու ծախսերը խիստ օպտիմալացնելու են, բերելու են այնպիսի վիճակի, որը ծառայությունների մատուցման նոր հնարավորություն է ապահովելու բնակիչների համար: Այս լայնածավալ գործընթացում, բացի Եվրամիությունից, մեր կողքին է նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, որը կարծում էմ, որ ամենակարևոր, ամենալուրջ դերակատարումն ունի այս բարեփոխումների ողջ ընթացքում: ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակում մենք այսօր, այս համաժողովով սկիզբ ենք դնում մի շատ կարևոր պրոցեսի, որը Եվրամիության շատ երկրներ անցել են, և ժամանակն է, որ մենք մեր տեղական իշխանություններում և ռեգիոնալ իշխանություններում նույնպես ունենանք էլեկտրոնային կառավարում»: Նախարարը նաև տեղեկացրել է, որ արդեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ սկսված է մի գործընթաց, որով համայնքներում ստեղծվելու են սոցիալական ծառայությունների օղակներ, բացի դրանից, արդեն ՀՀ համայնքներից ավելի քան 200-ում՝ այդ թվում գործող 18 խոշորացվածներում, կան համացանցային կայքեր, քաղաքացիների սպասարկման գրասենյակներ են գործում 24 համայնքում և մինչև տարեվերջ գրասենյակներ կբացվեն ևս 5-ում: Նա արդյունավետ քննարկումներ է մաղթել համաժողովի մասնակիցներին, ընդգծել, որ հնչած կարծիքները և առաջարկները թույլ կտան առաջընթաց ապահովել տեղական ինքնակառավարման ոլորտում:

ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Պյոտր Սվիտալսկին ասել է, որ երևանյան համաժողովը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ Հայաստանը Արևելյան գործընկերության շրջանակներում ակտիվ մասնակցություն ունի. «Հայաստանում նման համաժողովների անցկացումը շատ կարևոր է և մենք հավատում ենք, որ Արևելյան գործընկերությունը Բրյուսելում կայանալիք հաջորդ գագաթնաժողովի ժամանակ նոր որակների կարող է հասնել: Դրանք ներառում են գործողությունների լայն շրջանակ՝ արևելյան գործընկերության 4 հիմնական հենասյուները և բոլոր այս նպատակները ենթադրում են բոլոր շահառուների ակտիվ մասնակցություն՝ ներառյալ տեղական մակարդակում, ներառյալ տեղական և տարածքային ինքնակառավարման մարմինների մասնակցությունը, քանի որ ռեգիոնալ և տեղական իշխանություններն ամենամոտն են կանգնած մարդկանց առօրյա խնդիրներին, և նրանք այստեղ են այս խնդիրներին կոնկրետ լուծումներ տալու համար: Հետևաբար, մենք հավատում ենք, որ Բրյուսելում կայանալիք հաջորդ գագաթնաժողովին CORLEAP-ի դերն անչափ կարևոր կլինի»: ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավարի խոսքով, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումների առումով Հայաստանը այսօր շատ կարևոր փուլում է գտնվում, և դրանք իրականացվում են ԵՄ-ն աջակցությամբ. «Մենք փորձում ենք հնարավորինս աջակցել ՏԻՄ հզորացմանը տարբեր միջոցներով, դրանցից մեկը իհարկե փորձի փոխանակումն է: Ես շատ ուրախ եմ, որ մեր տարածքային զարգացման պիլոտային ծրագիրը, որը ներառում է մի քանի տեղական համայնքներ, կոնկրետ գաղափարներ և ծրագրեր է ներառում: Տնտեսական կայունությունն ու կայունացումն ամենուրեք թերևս մեր առաջնային մարտահրավերն է»:

Ռեգիոնների եվրոպական կոմիտեի և CORLEAP-ի անդամ Պավել Ադամովիչն էլ իր հերթին նշել է, CORLEAP-ի հիմնական ուղերձը. դա տեղական ժողովրդավարությունն է, տեղական իշխանությունների համագործակցության մակարդակի բարձրացումը և ապակենտրոնացումը: Պ. Ադամովիչը նշել է, որ այս ուղղությամբ ակտիվ և արդյունավետ աշխատում են տարածքային կառավարման և զարգացման նախարար Դ. Լոքյանի հետ: Համաժողովի բացումից հետո Դավիթ Լոքյանն ու Պյոտր Սվիտալսկին պատասխանել են լրագրողների հարցերին:

Ասուլիսից հետո համաժողովը շարունակել է աշխատանքները և քննարկվել են մի շարք թեմաներ՝ էլեկտրոնային կառավարման նպաստը Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների իրականացման համատեքստում, տարածաշրջանային համագործակցության կարևորությունը ռեգիոնալ և տեղական զարգացման խթանման գործում, ռեգիոնալ և տեղական զարգացման տնտեսական օգուտները և այլն:

«Նորարարությունները և տարածքային զարգացումը՝ որպես Արևելյան գործընկերության երկրների աճի գործոններ» խորագրով համաժողովի կայացմանը աջակցել է «Լավ Տեղական Ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիրը՝ ի դեմս Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության: